

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Նախնական դրույթներ

1.1. Այս Էջում ավտոմեքենաների վարձակալություն տրամադրողը համարվելու է Վարձատու, իսկ նրա ծառայություններից օգտվելու համար դիմողը՝ Պատվիրատու:

1.2. Ավտոմեքենաների վարձակալության և մյուս ծառայությունների պատվերները ցանկալի է կատարել նախօրոք: Պատվերներն ընդունվում են ինտերնետային էջի, հեռախոսազանգի, Էլ. նամակի, Viber կամ WhatsApp հավելվածների միջոցով, ինչպես մեր գրասենյակներում:

1.3. Ընդհանուր առմամբ, Ավտոմեքենաների ամրագրումը կատարվում է առանց կանխավճար պահանջելու, սակայն որոշ դեպքերում Վարձատուն կարող է Պատվիրատուից պահանջել կանխավճար կամ լրացուցիչ տեղեկություններ ամրագրման համար:

1.4. Ալկոհոլի, թմրանյութի, հոգեմետ կամ ինքնազգացողության վրա վնասակար ներգործող դեղերի ազդեցության տակ գտնվող անձինք չեն կարող կնքել Վարձակալության պայմանագիր և վարել Ավտոմեքենա:

2. Պատվիրատուի պարտավորությունները և հրավուևքները

2.1. Պատվիրատուն պարտավոր է ստույգ տվյալներ ներկայացնել պատվերը ձևակերպելիս եւ տվյալների հետագա փոփոխությունների մասին Վարձատուին տեղյակ պահել ծառայության մատուցումից առնվազն 5 օր առաջ:

2.2. Ավտոմեքենան համարվում է Պատվիրատուի կողմից ամրագրված, եթե առկա է Վարձատուի կողմից տրված գրավոր հաստատումն այդ մասին կամ կնքված է պայմանագիր Ավտոմեքենայի ամրագրման մասին: Ավտոմեքենան համարվում է վարձակալված, եթե գործողության մեջ է երկկողմանի կնքված Վարձակալության պայմանագիրը:

2.3. Ամրագրված Ավտոմեքենայից հրաժարվելու կամ վարձակալության սկզբնաժամկետը հետաձգելու դեպքում Պատվիրատուն որևէ տուգանք չի վճարում, եթե այդ մասին գրավոր տեղեկացրել է Վարձատուին վարձակալության սկզբնաժամկետից հաշված 48 ժամ առաջ: Հակառակ դեպքում Պատվիրատուն վճարում է տուգանք՝ վարձակալության 1 օրվա գնի չափով:

2.4. Այն դեպքում, երբ Պատվիրատուն՝ առանց նախապես զգուշացնելու կամ պատվերը չեղյալ համարելու ծանուցման, պայմանավորված ժամին չի ներկայանում ամրագրված Ավտոմեքենան ընդունելու համար, կիրառվում 3-ժամյա սպասելաժամանակ՝ սկսած ամրագրված Ավտոմեքենայի սկզբնաժամից, որից հետո պատվերն ինքնստինքյան համարվում է չեղարկված Վարձատուի կողմից:

2.5 Վարձակալված Ավտոմեքենան ընդունելու պահից Պատվիրատուն (կամ այն անձը ով պայմանագրով ստանձնում է ամրագրված Ավտոմեքենայի վարձակալության ողջ պատասխանատվությունը) համարվելու է Վարձակալ, իսկ Ավտոմեքենան վարողները՝ Վարորդներ:

3. Վարձակալի/Վարորդի պարտավորությունները ու հրավուևքները

3.1. Վարձակալը պետք է լինի 22 - 70 տարեկան և ունենա առնվազն 2 տարվա վարորդական փորձ՝ վարձակալության պայմանագիրը ստորագրելու համար:

3.2. Ավտոմեքենայի վարձակալության ողջ պատասխանատվությունը ստանձնում է Վարձակալը:

3.3. Ֆիզիկական անձանց դեպքում վարձակալության պայմանագիրը ստորագրելիս՝ Վարձակալը պետք է ներկայացնի վավեր վարորդական իրավունքի վկայական, վավեր անձնագիր (կամ ID card) և գրավի գումարի տրամադրման հնարավորություն (բանկային քարտով սառեցնելու, կանխիկ վճարելու միջոցով) կամ "սուպեր ծածկույթ" հավելավճար մուծելու հնարավորություն (մանրամասները՝ 7.2 - 7.5; 8.9 կետերում):

3.4. Իրավաբանական անձանց դեպքում վարձակալության պայմանագիրը ստորագրելիս՝ Վարձակալը պետք է ներկայացնի լիազորագիր պայմանագիրը կնքող կազմակերպության կողմից, լիազորված անձի անձնագիրը և վավեր վարորդական իրավունքի վկայական:

3.5. Վարձակալն իրավունք չունի ենթավարձակալության հանձնել վարձակալված Ավտոմեքենան:

3.6. Չնայած Ավտոմեքենայի վարձակալության ողջ պատասխանատվությունը ստանձնում է Վարձակալը, այնուամենայնիվ, եթե վարձակալված Ավտոմեքենան վարելու են Վարձակալից տարբեր այլ Վարորդներ, ապա նրանք նույնպես պետք է ստանան Ավտոմեքենան վարելու իրավունք Վարձատուի կողմից (այդ մասին հատուկ նշվում է վարձակալության պայմանագրում): Առանց Վարձատուի թույլտվության Վարձակալն իրավունք չունի Ավտոմեքենայի վարման իրավունք տալ որևէ այլ անձի:

3.7. Եթե վարձակալված Ավտոմեքենան վարելու են Վարձակալից տարբեր այլ Վարորդներ ապա նրանք նույնպես պետք է լինեն 22 - 70 տարեկան, ունենան առնվազն 2 տարվա վարորդական փորձ և ներկայացնեն վավեր վարորդական իրավունքի վկայականներ: Յուրաքանչյուր լրացուցիչ վարորդի վարման իրավունք տալու համար գանձվում է լրացուցիչ գումար:

3.8. Վարձակալված Ավտոմեքենան վարելիս Վարորդը պարտավոր է պահպանել ճանապարհային երթևեկության կանոնները: Վարորդը պատասխանատու է խախտումների համար նախատեսված տուգանքների վճարման համար: Վարորդը Ավտոմեքենան պետք է կայանի կայանման համար թույլատրվող տարածքներում, կայանելիս փակի Ավտոմեքենայի դռներն ու բեռնախցիկը, միացնի հակաառևանգման համակարգը և Ավտոմեքենայում չթողնի նրա բանալիներն ու փաստաթղթերը: Բանալիներն ու փաստաթղթերը պետք է լինեն Վարորդի մոտ և նրա մշտական հսկողության տակ: Ավտոմեքենայի առևանգման դեպքում Վարձակալը պարտավոր է վերադարձնել Ավտոմեքենայի բանալիների և փաստաթղթերի բնօրինակները:

3.9. Տեխնիկական անսարքություններ նկատելիս՝ Վարորդն անմիջապես պարտավոր է այդ մասին տեղեկացնել Վարձատուին: Եթե Ավտոմեքենայի տեխնիկական անսարքությունը կամ նրա բաղկացուցիչ մասերի թերությունը/կորուստը առաջացել է Վարորդի մեղքով, ապա նա ամբողջությամբ պարտավոր է փոխհատուցել ծագած վնասները: Եթե Ավտոմեքենայի շահագործման ընթացքում ոչ Վարորդի մեղքով առաջացել են տեխնիկական անսարքություններ կամ թերություններ և Ավտոմեքենայի հետագա շահագործումը դարձել է վտանգավոր, ապա նա իրավունք ունի պահանջել փոխարինել վարձակալված Ավտոմեքենան համարժեք Ավտոմեքենայով:

3.10. Վթարի, ինչպես նաև Ավտոմեքենայի (կամ նրա բաղկացուցիչ մասերի) կորստի/գողության դեպքում Վարորդը պարտավոր է անհապաղ այդ մասին տեղյակ պահել Վարձատուին և Ոստիկանությանը (մինևույն ժամանակ վթարի դեպքում ավտոմեքենան տեղաշարժ չանելով), օժանդակել օրենքով սահմանված կարգով արձանագրություններ և պատշաճ տեղեկանքներ կազմելուն, ներկայացնել դրանք Վարձատուին:

3.11. Վարձակալի կամ Վարորդի կողմից երրորդ անձանց և նրանց գույքին պատճառված վնասի դեպքում վերջիններս Վարձատուին որևէ պահանջ ներ-կա-յացնելու իրավասություն չունեն և Վարձատուն որևէ պատաս-խանատ-վություն չի կարող կրել: Ապահովագրական ընկերությունը "Ավտոտրանսպորտ-տային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության" պայմանագրով, "Ավտո-կասկո ապահովագրության պայ-մանագրով" և "Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին" ՀՀ օրենքով սահմանված դեպքերում սուբբո-գացիայի իրավունքը կարող է իրացնել բացառապես Վարձակալի կամ Վարորդի նկատմամբ:

3.12. Վարձակալի կամ Վարորդի գործողությունների (անգործության), Ապահովագրության պայմանագրի պայմանների խախտման դեպքում Վարձատուն որևէ պատասխանատվություն չի կրում և Ապահովագրական ընկերությունը չի կարող Վարձատուից պահանջել ապահովագրական հատուցման գումարի վերադարձ (սուբբոգացիա):

4. Վարձատուհի պարտավորություններն ու հրավուևքները

4.1. Վարձատուն պարտավորվում է պատվերը ստանալուց հետո առավելագույնը 2 օրվա ընթացքում կապ հաստատել Պատվիրատուի հետ, տեղեկացնել պատվերի իրականացման հնարավորությունների մասին եւ հավաստի տվյալներով պատասխանել Պատվիրատուի բոլոր հարցերին:

4.2. Վարձատուն պարտավորվում է համաձայնեցված ժամկետներում Պատվիրատուին տրամադրել ամրագրված Ավտոմեքենան: Եթե ամրագրված Ավտոմեքենան ունի տեխնիկական անսարքություններ, Վարձատուն պարտավորվում է Պատվիրատուին տրամադրել նույն խմբում գտնվող (նույն տեսակի և նույն կարգի) մեկ այլ Ավտոմեքենա՝ ոչ ավելի բարձր գնով, քան ամրագրված Ավտոմեքենայի գինն է:

4.3. Եթե վարձակալության օրը Վարձատուն հրաժարվում է Պատվիրատուին տրամադրել Ավտոմեքենա նախորդ պարբերությունում նշված կարգի համաձայն, ապա վճարում է նրան տուգանք վարձակալության 1 օրվա արժեքի չափով:

4.4. Վարձատուն որևէ պատասխանատվություն չի կրում վարձակալված Ավտոմեքենաներում կորած կամ անհետացած անձնական իրերի համար, ինչպես նաև վարձակալված Ավտոմեքենաների ուղևորների առողջական խնդիրների համար:

4.5. Վարձատուն պարտավորվում է վարձակալության պայմանագրի գործողության ընթացքում իրականացնել վարձակալված Ավտոմեքենայի այնպիսի տեխնիկական սպասարկումը, որոնց առաջացումը պայմանավորված չէ Վարձակալի մեղավորությամբ՝ բացառությամբ առաջին անհրաժեշտության սպասարկումից (պահեստային անիվի փոխարինում, դիմապակու մաքրման հեղուկի լիցքավորում, լուսարձակման լամպերի փոխարինում և այլն):

4.6. Վարձատուն պարտավորվում է խելամիտ ժամկետում՝ անհանգստություն չպատճառելով Վարձակալին, վերացնել վարձակալված Ավտոմեքենայի թերությունները կամ տրամադրել նույն խմբում գտնվող (նույն տեսակի և նույն կարգի) մեկ այլ Ավտոմեքենա, եթե վարձակալության պայմանագրի գործողության ընթացքում Ավտոմեքենան խափանվել է ոչ Վարձակալի մեղքով և նրա հետագա շահագործումը դարձել է վտանգավոր:

4.7. Վարձատուն պարտավորվում է Վարձակալին տրամադրել Ավտոմեքենայի շահագործման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

4.8. Վարձակալության պայմանագրի որևէ կետի խախտման դեպքում Վարձատուն իրավունք ունի հետ վերցնել տրամադրված Ավտոմեքենան, միակողմանի լուծել պայմանագիրը և չվերադարձնել որևէ գումար նրան և պահանջել պատճառված վնասների լրիվ հատուցում: Այդ դեպքում Վարձատուն որևէ պատասխանատվություն չի կրում Ավտոմեքենայում թողած իրերի կորստի կամ վնասման համար:

5. Ավտոմեքենաների հանձնումն ու ընդունումը, շահագործման կարգը

5.1. Վարձակալված Ավտոմեքենաները թույլատրվում է շահագործել միայն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի տարածքում: Վարձատուի կողմից հատուկ թույլտվության դեպքում Ավտոմեքենաները կարելի է շահագործել նաև Վրաստանի Հանրապետությունում (նվազագույնը 2 օր վարձակալության ժամկետով): Բացի այդ, Վարձակալը պարտավորվում է ձեռք բերել ապահովագրություն (կետ 8.1):

Վարձակալության հանձնվող Ավտոմեքենաները արտաքին գովազդ չունեն: Ավտոմեքենաների վազքը սահմանափակված չէ:

5.2. Վարձակալված Ավտոմեքենաների փաստաթղթերի ձևակերպումը, հանձնումն ու ընդունումը կատարվում է ինչպես մեր գրասենյակներում, այնպես էլ, լրացուցիչ վճարի դեպքում, Պատվիրատուի նախանշած ցանկացած այլ վայրում (այդ թվում՝ օդանավակայանում, Երևանում և Երևանից դուրս): Բոլոր դեպքերում Պատվիրատուն պարտավոր է նախօրոք համաձայնություն ձեռք բերել Վարձատուից Ավտոմեքենայի հանձնման և ընդունման վայրի վերաբերյալ:

5.3. Մեր ավտովարձույթի գրասենյակների աշխատանքային օրերն ու ժամերն են՝
ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 31
երկուշաբթի - շաբաթ՝ 09.00 - 19.00

նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31
երկուշաբթի - շաբաթ՝ 10.00 - 19.00

կիրակի և տոն օրեր՝ ոչ աշխատանքային:

5.4. Կազմակերպության գրասենյակներում և երևան քաղաքի կենտրոնում Ավտոմեքենայի հանձնումն ու ընդունումը կատարվում է առանց հավելվածարի:

5.5. Երևան ք. օդանավակայանում Ավտոմեքենայի ընդունում կամ հանձնում կատարելու դեպքում Վարձակալը վճարում է հավելյալ 9.000 դրամ:

5.6. Գյումրի ք. օդանավակայանում Ավտոմեքենայի ընդունում կամ հանձնում կատարելու դեպքում Վարձակալը վճարում է հավելյալ 25.000 դրամ:

5.7. Երևանում կենտրոնից դուրս նախանշած հասցեում Ավտոմեքենայի ընդունում կամ հանձնում կատարելու դեպքում Վարձակալը վճարում է հավելյալ 2.000 դրամ:

5.8. Երևանից դուրս Ավտոմեքենայի ընդունում կամ հանձնում կատարելու դեպքում Վարձակալը կախված հեռավորությունից վճարում է հավելյալ գումար 500 դրամ՝ 1 կմ-ի համար:

5.9. Ոչ աշխատանքային օրերին կամ ժամերին Ավտոմեքենայի հանձնում կամ ընդունում կատարելու համար Վարձակալը վճարում է հավելյալ 4.000 դրամ:

5.10. Վարձակալվող Ավտոմեքենաները Վարձակալին տրամադրվում են պատշաճ վիճակում՝ տեխնիկապես անթերի, մաքուր և վառելիքի որաշակի լիցքավորմամբ: Վարձակալված Ավտոմեքենաներում անվճար տրվում են հովանոց, քարտեզ, պահեստային անիվ, առաջին անհրաժեշտության գործիքներ, դեղատուփ և կրակմարիչ: Ձմեռային ամիսներին՝ Ավտոմեքենաները տրամադրվում են ձմեռային անվադողերով:

5.11. Վարձակալը պարտավոր է հետևել Ավտոմեքենայի շահագործման ընդունված կանոններին և Ավտոմեքենան լիցքավորել բարձրորակ վառելիքի տեսակով:

5.12. Վարձակալը պարտավոր է վերջնաժամկետին պատշաճ վիճակում հետ վերադարձնել Ավտոմեքենան, բոլոր փաստաթղթերը, լրացուցիչ սարքավորումներն ու պարագաները:

5.13. Ավտոմեքենաները, Վարձատուին հետ վերադարձնելիս, պետք է լինեն չվնասված, տեխնիկապես անթերի, մաքուր և վառելիքի նույնքան լիցքավորմամբ, որքանով որ հանձնվել են Վարձակալին: Եթե Ավտոմեքենայի տեխնիկական անսարքությունը կամ նրա բաղկացուցիչ մասերի թերությունը/կորուստը առաջացել է Վարձակալի մեղքով, ապա նա ամբողջությամբ պարտավոր է փոխհատուցել ծագած վնասները:

5.14. Ավտոմեքենան մաքուր վիճակում Վարձատուին չհանձնելու դեպքում գանձվում է 3.000 դրամ:

5.15. Ավտոմեքենան վառելիքի պակաս լիցքավորմամբ Վարձատուին չհանձնելու դեպքում գանձվում է 500 դրամ լիցքավորման ծառայության վճար՝ վառելիքի յուրաքանչյուր պակաս լիտրի դիմաց:

5.16. Ավտոմեքենայի հանձնման և ընդունման ժամանակ Վարձակալը Վարձատուի մասնագետի հետ զննում է Ավտոմեքենան և կազմում նրա վիճակի վերաբերյալ համապատասխան հանձնման-ընդունման ակտ, որը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մաս: Ավտոմեքենայի վերաբերյալ ցանկացած թերություն արձանագրվում է հանձնման-ընդունման ակտում: Վարձակալը մինչև Ավտոմեքենան վարձակալության ընդունելը պարտավոր է Ավտոմեքենայի անսարքություններ կամ որևէ այլ թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին տեղեկացնել Վարձատուին և համապատասխան նշում կատարել հանձնման-ընդունման ակտում: Վարձակալը Ավտոմեքենայի ընդունման ժամանակ նշված թերություններից բացի հետագայում հայտնաբերված որևէ այլ թերության մասին հայտարարություն անելու իրավունքից զրկվում է:

5.17. Հանձնման-ընդունման ակտը երկկողմանի հաստատմամբ պահպանվում է յուրաքանչյուր կողմի մոտ և հիմք է հանդիսանում Ավտոմեքենայի թերություններն ու վնասները զննելիս և գնահատելիս, ընդ որում Վարձակալը ընդունում է, որ Վարձատուն

իրավունք ունի որոշել, թե ում մեղքով են առաջացել թերություններն ու վնասները: Եթե Վարձակալը հրաժարվում է ստորագրել հանձնման-ընդունման ակտը Ավտոմեքենան հանձնելիս, ապա Վարձատուն իրավունք ունի կազմել այն երկու վկաների ներկայությամբ և օգտագործել ըստ անհրաժեշտության:

5.18. Արգելվում է Ավտոմեքենաները շահագործելիս տեղափոխել հրավտանգավոր բեռներ, պայթուցիկ նյութեր, մաքսանենգ ապրանքներ և օրենքով արգելված կամ վտանգավոր այլ բեռներ:

5.19. Արգելվում է Ավտոմեքենաներն օգտագործել մրցույթներում և շահագործել որպես քարշակ կամ որպես ուսումնական Ավտոմեքենա, տաքսի ծառայության և բեռնափոխադրման նպատակով:

5.20. Արգելվում է Ավտոմեքենաների ինքնուրույն տեխնիկական վերանորոգումը (բացառությամբ առաջին անհրաժեշտության սպասարկումից՝ պահեստային անիվի փոխարինում, դիմապակու մաքրման հեղուկի լիցքավորում, լուսարձակման լամպերի փոխարինում և այլն) և լրացուցիչ դետալների տեղադրումը:

6. Վարձակալության ժամկետներն ու գների հաշվարկը

6.1. Ավտոմեքենաների վարձակալության նվազագույն ժամկետը 1 օրն է: Վարձակալության առավելագույն ժամկետ չի սահմանվում: Վարձակալության սկզբնաժամկետը համարվում է Ավտոմեքենան տրամադրելու պահը, իսկ վերջնաժամկետը այն հետ վերադարձնելու պահը:

6.2. Որքան երկար է վարձակալության ժամկետը՝ այնքան ցածր է վարձակալության 1 օրվա գինը: Երկարաժամկետ պատվերների, ինչպես նաև մշտական հաճախորդների համար գործում են հատուկ գներ:

6.3. Եթե վարձակալության ժամկետը բացի լիարժեք օրերից ներառում է նաև հավելյալ ժամեր, ապա ամրագրման համակարգը հաշվարկը կատարում է հետևյալ սանդղակի համաձայն.

- մինչև 3 հավելյալ ժամի համար հաշվարկվում է վարձակալության 1 օրվա գնի 25%-ը
- 3 - 6 հավելյալ ժամի համար հաշվարկվում է վարձակալության 1 օրվա գնի 50%-ի չափով
- 6-ից ավելի հավելյալ ժամի համար հաշվարկվում է վարձակալության 1 օրվա գնի 100%-ի չափով

6.4. Ավտոմեքենաների վարձակալության գները ներառում են դրանց տեխնիկական սպասարկման ծախսերը, բոլոր պետական հարկերը, կարմիր գծանշումներով ավտոկայանատեղիների տուրքերը, երևան քաղաքում, ԱՊՊԱ և ԿԱՍԿՈ ապահովագրությունների արժեքները, ինչպես նաև Ավտոմեքենայի փոխարինումը տեխնիկական սպասարկման ընթացքում:

6.5. Ավտոմեքենաների վարձակալության գները չեն ներառում վարորդի, վառելիքի, ավտովագման վճարները և ճանապարհատրանսպորտային խախտումների տուգանքները:

6.6. Վարձակալից բացի Ավտոմեքենան այլ Վարորդների կողմից վարելու իրավունքի տրամադրման համար գանձվում է օրեկան 2.000 դրամ՝ բայց ոչ ավելի քան 10.000 դրամ վարձակալության ողջ ժամկետի համար:

6.7. Վարձակալված Ավտոմեքենան վերջնաժամկետից շուտ հետ վերադարձնելու դեպքում կատարվում է վերահաշվարկ համաձայն փաստացի վարձակալված օրերի և դրան համապատասխան գնացուցակի, ընդ որում՝ անկախ հետ վերադարձման ժամից, այդ օրը և հաջորդ օրը հաշվարկվում են որպես լիարժեք վարձակալված օրեր: Վերահաշվարկի արդյունքում Վարձակալին հետ է վերադարձվում լրացուցիչ գումարն ամբողջությամբ, եթե վերջինս պայմանագրով սահմանված վերջնաժամկետից առնվազն 48 ժամ առաջ այդ մասին տեղյակ է պահել Վարձատուին, հակառակ դեպքում որևէ գումար հետ չի վերադարձվում:

6.8. Վարձակալության ժամկետը երկարաձգելու դեպքում անհրաժեշտ է նախօրոք տեղյակ պահել Վարձատուին և Վարձատուի կողմից համա-ձայնություն տալու դեպքում, կնքել համա-ձայնագիր երկարաձգման վերաբերյալ:

6.9. Վարձակալված Ավտոմեքենան պայմանագրով նախատեսված վերջնաժամկետից ուշ վերադարձնելու դեպքում, անկախ ուշացման պատճառներից, Վարձակալը վճարում է հավելավճար.

- Մինչև 3 ժամ ուշացնելու դեպքում՝ վարձակալության 1 օրվա գնի 50%-ի չափով
- 3 - 6 ժամ ուշացնելու դեպքում՝ վարձակալության 1 օրվա գնի 100%-ի չափով
- 6 ժամից ավելի ուշացնելու դեպքում՝ վարձակալության 1 օրվա գնի կրկնապատիկի չափով

6.10. Վարձակալված Ավտոմեքենան պայմանագրով նախատեսված վերջնաժամկետից 24 ժամ հետո չվերադարձնելու դեպքում Վարձատուն կարող է դիտել դա որպես առևանգում և հետ վերցնել վարձակալված Ավտոմեքենան ցանկացած վայրից առանց Վարձակալին զգուշացնելու կամ դիմել Ոստիկանության՝ Ավտոմեքենան բերման ենթարկելու, Վարձակալին պատասխանատվության կանչելու պահանջով, ընդ որում այդ դեպքում Ավտոմեքենայում թողած իրերի պատասխանատվությունը կրում է Վարձակալը:

7. Վարձակալության ընդհանուր գումարը, գրավի գումարը և վճարումների կարգը

7.1. Վարձակալության ընդհանուր գումարը Ավտոմեքենայի վարձակալության արժեքի և պատվիրված լրացուցիչ ծառայությունների արժեքի հանրագումարն է: Վարձակալության արժեքն ամբողջությամբ վճարվում է պայմանագիրը ստորագրելու պահին: Եթե նախօրոք կատարվել է կանխավճար, ապա պայմանագիրը ստորագրելու պահին վճարվում է միայն վերջնավճարը:

7.2. Վարձակալը պարտավոր է վճարել լրացուցիչ ծախսերի ու տուգանքների համար, որոնք կհաշվարկվեն Վարձատուի կողմից Ավտոմեքենան հետ ընդունելու պահին՝ սահմանված գնացուցակի համաձայն: Այդ նպատակով Վարձակալը պայմանագիր ստորագրելու պահին պետք է ապահովի Գրավի գումարի առկայություն, որի միջոցով անհրաժեշտության դեպքում կծածկվեն վերոհիշյալ ծախսերը (դրանք ապահովագրության գումարներով չփոխհատուցվող կամ ապահովագրական պատահար չհամարվող ծախսերն են):

7.3. Գրավի գումարը կարելի է ապահովել բանկային քարտով կամ կանխիկ դրամն ի պահ հանձնելով: Բանկային քարտի պարագայում կատարվում է Գրավի գումարի չափով սառեցում քարտից, եթե Վարձակալը չունի "սուպեր ծածկույթ" (կետ 8.9), իսկ եթե Վարձակալը ձեռք է բերել "սուպեր ծածկույթ", ապա բավական է քարտից գումար գանձելու համաձայնություն: Գրավի գումարը սառեցնելիս՝ հարկավոր է թողնել նույն բանկային քարտի տվյալները (քարտի համարը և գործողության ժամկետը):

7.4. Եթե վարձակալված Ավտոմեքենան պատշաճ վիճակում և ճիշտ ժամկետին հետ է վերադարձվում Վարձատուին, ապա Գրավի գումարն ամբողջությամբ հետ է տրվում Վարձակալին: Եթե առաջացել են լրացուցիչ ծախսեր, որոնք չեն գերազանցում Գրավի գումարը, ապա դրանք փոխհատուցվում են Գրավի գումարի հաշվին, իսկ մնացորդը հետ է տրվում Վարձակալին: Եթե լրացուցիչ ծախսերը գերազանցում են Գրավի գումարը, ապա որևէ գումար Վարձակալին հետ չի տրվում, և ավելին՝ նրանից գանձվում է նաև լրացուցիչ ծախսերի չփոխհատուցված մասը:

7.5. Բոլոր ավտոմեքենաների համար Գրավի գումարը սահմանվում է 150.000 դրամ, բացի E կարգի, "Wagon" տեսակի Ավտոմեքենա-ներից, որոնց Գրավի գումարը 200.000 դրամ է:

7.6. Վճարումները կարելի է կատարել կանխիկ (ՀՀ դրամով), բանկային քարտով կամ բանկային փոխանցումով: Արտարժույթով վճարումների դեպքում հիմք են ընդունվում ՀՀ ԿԲ կողմից ներկայացված արտարժույթի փոխարժեքները, որոնք կարող են տարբերվել այս կայքում ներկայացվածից: Բանկային քարտով վճարումների դեպքում (ARCA, VISA, MasterCard, Maestro, AMEX) կգործի հավելավճար՝ ընդհանուր գումարի 2%-ի չափով:

8. Ապահովագրությունը և պատասխանատվությունը վնասի կորստի դեպքում

8.1 Ավտոմեքենան Վրաստանի Հանրապետության տարածքում շահագործելու համար Վարձատուն, ավտոմեքենան տրամադրելիս, ձևակերպում է ԿԱՍԿՈ ապահովագրություն

Վարձակալի անունով, ինչի համար լրացուցիչ գանձվում է 10.000 դրամ: Այս արժեքի մեջ ներառված է նաև հատուկ թույլտվություն (լիազորագիր) Վրաստան մուտք գործելու համար: Բացի այդ, Վրաստան մուտք գործելիս, Վարձակալը պարտավորվում է ապահովագրել իր քաղաքացիական պատասխանատվությունը՝ պարտադիր ԱՊՊԱ ապահովագրություն, իրեն ամրակցված տրանսպորտային միջոցի համար Վրաստանի տարածքում ամբողջ ժամանակահատվածում գտնվելու համար: Վրաստանի տարածքում պատահարի դեպքում, եթե Վարձակալը շահագործել է ավտոմեքենան՝

- առանց ԿԱՍԿՈ ապահովագրության, ապա նա կրում է տեղի ունեցած պատահարի (վնաս, կորուստ, առևանգում, հրդեհ և այլն) ողջ պատասխանատվությունը և պարտավոր է փոխհատուցել թե՛ վարձակալված Ավտոմեքենայի և նրա ուղևորների, թե՛ Վարձատուի գույքային և անձնական վնասներն ու կորուստները;

- առանց պարտադիր ԱՊՊԱ ապահովագրության, ապա նա կրում է տեղի ունեցած պատահարի (ԱՊՊԱ ապահովագրություն չունենալու հետևանքով առաջացած տուգանքներ, վնաս, կորուստ, առևանգում, հրդեհ և այլն) ողջ պատասխանատվությունը և պարտավոր է փոխհատուցել թե՛ երրորդ անձանց և թե՛ վարձակալված Ավտոմեքենայի և ուղևորների գույքային և անձնական վնասներն ու կորուստները:

8.2. Վարձակալության հանձնված Ավտոմեքենային կամ երրորդ անձանց (նրանց գույքին, առողջությանը, ուղևորներին) պատճառված վնասը Ապահովագրական ընկերության կողմից չհատուցվելու դեպքում, երբ ապահովագրական հատուցման տրամադրման մերժումը պայմանավորված է Վարձակալի գործողություններով (անգործությամբ), այդ թվում ապահովագրության կանոնների խախտման կամ այնպիսի գործողությունների դեպքում, երբ պատճառված վնասը չի դիտարկվել ապահովագրական, ապա Ավտոմեքենային, երրորդ անձանց (նրանց գույքին, առողջությանը) պատճառված վնասը ենթակա է հատուցման Վարձակալի կողմից:

8.3. ԱՊՊԱ-ն ապահովագրվում է այն վնասները, որոնք առաջացել են տրանսպորտային միջոցի օգտագործումից մյուս՝ տուժող կողմին, պատճառված վնասներից և տուժողի գույքին պատճառված վնասներ: Երրորդ անձանց վնասները փոխհատուցվում են հետևյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի տարածքներում՝ անձնական վնասներ՝ տուժողի առողջությանը պատճառված վնասներ և դրանց հետևանքով կորցրած աշխատավարձ/եկամուսներ, ինչպես նաև՝ տուժողի մահ - մեկ ապահովագրական պատահարի համար 3,000,000 ՀՀ դրամ; տուժողի գույքին պատճառված վնասներ - առավելագույնը 1.800.000 ՀՀ դրամ:

8.4. Ապահովագրական ընկերության կողմից երրորդ անձանց պատճառված վնասներն ամբողջովին չհատուցելու կամ ընդհանրապես չհատուցելու դեպքում վնասների հատուցման պարտականություն կրում է բացառապես Վարձակալը: Վարձատուն Ավտոմեքենայի վարձակալության հանձնված ամբողջ ժամանակահատվածի համար Վարձակալի կողմից երրորդ անձանց պատճառված վնասների համար որևէ պատասխանատվություն չի կրում:

8.5. ԿԱՍԿՈ-ն ապահովագրում է վարձակալված Ավտոմեքենայի, վարորդի և նաև նրա ուղևորների անձնական վնասների փոխհատուցումը՝ ճանապարհատրանսպորտային պատահարների, հրդեհի, առևանգման և մյուս ապահովագրական պատահարների դեպքում՝ հետևյալ կերպ.

ուղևորների/վարորդի անձնական վնասներ՝ առավելագույնը 3.000.000 դրամ
Ավտոմեքենայի վնասներն ամբողջությամբ՝ համաձայն ապահովագրության պայմանների՝ բացառությամբ չփոխհատուցվող գումարը

8.6. Վարձակալը, պահպանելով վարձակալության պայմանագրի կետերը (այդ թվում ապահովագրության), Էսպես սահմանափակում է իր ֆինանսական պատասխանատվությունը, եթե դրանց մասին ժամանակին տեղյակ է պահել Վարձատուին (անհրաժեշտության դեպքում նաև Ոստիկանությանը):

8.7. Ցանկացած պատահարի, կորստի կամ վնասի դեպքում Վարձակալը պետք է ներկայացնի օրենքով սահմանված կարգով կազմված արձանագրություն, ինչպես նաև պատահարի մասնակից մյուս կողմերի կամ վկաների մասին բավարար տվյալներ: Ոչ մի

հանգամանքներում Վարձակալը չպետք է ընդունի ցանկացած երրորդ անձնաց պահանջները:

8.8. Եթե Վարձակալը պահպանել է ճանապարհային երթևեկության կանոնները, վարձակալության պայմանագրի (այդ թվում ապահովագրության) դրույթները, ապա ապահովագրական պատահարի դեպքում նրա պատասխանատվությունը վարձակալված Ավտոմեքենայի և նրա ուղևորների նկատմամբ սահմանափակվում է գրավի գումարով, ընդ որում.

- Եթե ապահովագրական պատահարի մեղավոր կողմը Վարձակալն է (կամ մեղավոր կողմը բացակայում է), ապա Վարձակալը փոխհատուցում է առավելագույնը գրավի գումարի չափով:

- Եթե ապահովագրական պատահարը Վարձակալի մեղքով չէ և մեղավոր կողմը առկա է, ապա գրավի գումարն ամբողջությամբ հետ է վերադարձվում նրան:

- Ավտոմեքենայի բաղկացուցիչ մասերի կորստի, վնասվածքի կամ Ավտոմեքենայի առևանգման, հրդեհման դեպքերում Վարձակալը փոխհատուցում է առավելագույնը գրավի գումարի չափով:

8.9. Վարձակալը պայմանագիրը կնքելիս կարող է 8.8 կետում նշված պատասխանատվությունը փոխարինել "Սուպեր ծածկույթ" հավելվածարով, որը վերադարձման ենթակա չէ որևէ պարագայում և լիովին ազատում է 8.8 կետում թվարկված փոխհատուցումներից: "Սուպեր ծածկույթը" վարձակալության յուրաքանչյուր օրվա համար կազմում է

- 8.000 դրամ / օրական` 1-2 օրվա դեպքում;
- 6.000 դրամ / օրական` 3-4 օրվա դեպքում;
- 5.000 դրամ / օրական` 5-7 օրվա դեպքում;
- 4.500 դրամ / օրական` 8 կամ ավելի օրերի դեպքում:

Սուպեր ծածկույթ ձեռք բերելիս` հարկավոր է թողնել կա՛մ որևէ բանկային քարտի տվյալներ (քարտի համարը և գործողության ժամկետը), կա՛մ 70.000 դրամ գրավի գումար (ոչ ապահովագրական դեպքերի համար):

8.10. Եթե Վարձակալը չի պահպանել ճանապարհային երթևեկության կանոնները կամ վարձակալության պայմանագրի (այդ թվում ապահովագրության) որևէ դրույթ, ապա նա կրում է տեղի ունեցած պատահարի (վնաս, կորուստ, հրդեհ և այլն) ողջ պատասխանատվությունը և պարտավոր է փոխհատուցել թե՛ վարձակալված Ավտոմեքենայի և նրա ուղևորների, թե՛ Վարձատուի և թե՛ երրորդ անձանց գույքային և անձնական վնասներն ու կորուստները:

9. Լրացուցիչ ծառայություններ

9.1. Ավտոմեքենա վարձակալելիս կարող եք օգտվել նաև հետևյալ լրացուցիչ ծառայություններից`

- Մանկական նստատեղ - 4.000 դրամ / 1 օրը: 5 կամ ավելի օրով վարձակալելիս` գանձվում է 20.000 դրամ` անկախ օրերի թվից:
- Նավիգացիոն համակարգ - 3.000 դրամ / 1 օրը: 5 կամ ավելի օրով վարձակալելիս` գանձվում է 15.000 դրամ` անկախ օրերի թվից:
- Վարորդի ծառայություն - 9.000 դրամ / 1 օրը
- Շարժական Wi-Fi ինտերնետ - 1.300 դրամ / 1 օրը

Նշված ծառայությունների մասին մանրամասն կարող եք ծանոթանալ "Այլ ծառայություններ" էջում:

9.2. Այս էջում ներկայացված վարձակալության պայմաններն ու պարտավորությունները վերաբերվում են նաև լրացուցիչ ծառայություններին:

10. Անհաղթահարելի ուժի ազդեցություն

Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե պարտավորությունները չեն կատարվել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով (երկրաշարժ, ջրհեղեղ, պատերազմ, հաղորդակցական միջոցների աշխատանքի դադարեցում եւ այլն):